ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«18» Նոյեմբերի 2024թ. N ՄՈ/543 -Ա

ք. Արմավիր

«ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՎԱՀԱՆ ՌՇՏՈՒՆՈՒ ԱՆՎԱՆ ԹԻՎ 11 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2024 թվականի նոյեմբերի 18-ի N ՄՈ/541-Ա և N ՄՈ/542-Ա որոշումները, «Վաղարշապատի Վահան Ռշտունու անվան թիվ 11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ն.Ալավերդյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել «Վաղարշապատի Վահան Ռշտունու անվան թիվ 11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Նարինե Նազարյանին (համաձայնությամբ):

3. Հանձնաժողովին (Ն.Ալավերդյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը (գլխավոր մասնագետ Ա. Համբարձումյան)՝ աշխատանքներն իրականացնելու համար ապահովել հերթապահ մեքենայի տրամադրումը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզպետի

2024 թվականի Հոկտեմբերի 18 **ի**

N ՄՈ/543 **-Ա որոշման**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ն.Ալավերդյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ

Անդամներ՝

Ս.Ղուկասյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

Ջ. Եղոյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

Հանձնող՝

Մարգարիտա Սարգսյան- «Վաղարշապատի Վահան Ռշտունու անվան թիվ 11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության նախկին տնօրեն

Ընդունող՝

Աստղիկ Վիրաբյան - «Վաղարշապատի Վահան Ռշտունու անվան թիվ 11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Недействительная подпись

VERIFIED OCSP 18.11.2024 17:40:28 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023